ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1083381
18-03-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *ՀՀ վարչապետի աշխատակազմ*

Դիմող՝ *ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2021, ՎԱՆԱՁՈՐ,*
*ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 54, 3*
vardanyan.davit@outlook.com : 37493003405

**ՀԱՐՑՈՒՄ**

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Մարզ Վայոց Ձոր, համայնք Արենի, գյուղ Արեն հասցեում գտնվող 4.96006 հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Միհրան Դավթի Մարտիրոսյանին (կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0184-0091, սեփականության վկայականի N 24052022-10-0033, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ այլ հողատեսք) (այսուհետ՝ **Հողամաս**) (սեփականության վկայականը կցվում է)։

Հողերի իրավական ռեժիմը, որպես կանոն, սահմանվում է հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումների տեսքով՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի։

Համաձայն ՀՀ կադաստրի Կոմիտեի 14.03.24 թ. N ՄՏ-14032024-10-0048 միասնական տեղեկանքի՝ վերը նշված Հողամասի նկատմամբ սահմանափակումներ կիրառված չեն և հատուկ նշումներ կատարված չեն (միասնական տեղեկանքը կցվում է)։

Վերը նշված հոդվածից բխում է նաև, որ հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերն ու գործառնական նշանակությունը և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումները կարող են նշվել ոչ միայն անշարժ գույքի պետական միասնական կադաստրի փաստաթղթերում, այլ նաև այլ բնույթի փաստաթղթերում՝ այդ թվում նաև, օրինակ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներում, հատակագծերով և այլն։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին՝

***Արդյո՞ք, Ձեր մոտ առկա տեղեկատվության համաձայն, նշված Հողամասի նկատմամբ առկա են սահմանված հատուկ իրավական ռեժիմներ (այդ թվում նաև հատուկ պահպանվող և հատուկ նշանակության հողերին բնորոշ), նշումներ կամ սահմանափակումներ (այդ թվում նաև՝ սակայն, չսահմանափակվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա կիրառված) այլ բնույթի, քան բնորոշ է նմանատիպ գյուղատնտեսական նշանակության հողամասերին՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնների:***

Առդիր՝

1. Փաստաբանի արտոնագիր,
2. Անձնագիր,
3. Սեփականության վկայական,
4. Միասնական տեղեկանք։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Կից՝ 4 ֆայլ

Դիմող՝

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ